Ուժի մեջ է՝ 01.04.2022թ-ից

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ

«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ-ն ֆիզիկական անձ հաճախորդներին առաջարկում է հետևյալ բանկային հաշիվների տեսակները՝

- Ընթացիկ հաշվիներ,
- Առարկայազուրկ մետաղական հաշիվներ,
- Հատուկ բանկային հաշիվներ,

Հաշիվները բացվում են ՀՀ քաղաքացիների համար, ինչպես նաև այն օտարերկրյա անձանց համար, որոնց կենսական շահերի կենտրոնը Հայաստանում է: Որպես ՀՀ-ում կենսական շահերի կենտրոն ունենալու հիմնավորում կարող է ծառայել հետևյալ հիմքերից առնվազն մեկը՝

- ՀՀ-ում կացության քարտ,
- Բնակարանի առնվազն 3 ամսով վարձակալության պայմանագիր,
- Հյուրանոցային համարի առնվազն 1 ամսով ամրագրման պայմանագիր,
- ՀՀ-ում աշխատանքային պայմանագիր,
- ՀՀ-ում գրանցված ԱՁ-ի պետռեգիստրի վկայական,
- Իր կողմից ՀՀ-ում գրանցված ընկերություն պետռեգիստրի վկայական,
- «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ-ում առնվազն 6 ամիս ժամկետով և առնվազն 5 000 000 ՀՀ դրամ, 10,000 ԱՄՆ դոլար կամ 10,000 ԵՎՐՈ գոմարոի ժամկետային ավանդի ներդրում:

<u>Ընթացիկ հաշիվների բացում</u>

Այս հաշվի տեսակը նախատեսված է այնպիսի բանկային գործարքների համար, ինչպիսիք են՝ աշխատավարձի ստացումը կամ հաշվին մուտքագրվող այլ եկամուտների տնօրինումը, հաշվին ժամկետային ավանդի տոկոսների մուտքագրումը, վարկային քարտի կամ վարկերի գծով ընթացիկ վճարումների կազմակերպումը և այլն:

Մեր մոտ հաճախորդների համար բացվում են նաև ՀՀ դրամով պետական աջակցության հաշիվներ, որոնց միջոցով պետական աջակցության ծրագրերում ընդգրկված հաճախորդները կարող են ստանալ իրենց հասանելիք պետական կենսաթոշակները:

Բանկային հաշիվների բացման համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- Հաշվի բացման դիմում՝ մեր ձևանմուշի համաձայն,
- Անձնագիր և սոցիալական քարտ կամ այն չունենալու մասին տեղեկանք, կամ միայն նույնականացման քարտ,
- Պետական աջակցության հաշիվների բացման դեպքում՝ տվյալ տեսակի հաշվի բացման համար ՀՀ օրենսդրությամբ պահանջվող փաստաթղթեր,
- Մեր պահանջով այլ փաստաթղթեր («Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի պահանջներից ելնելով):

Բանկային հաշիվները բացվում են հետևյալ փուլերով

- Հաճախորդին հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի ներկայացում և վերջինիս անհրաշեշտ այլ տեղեկատվության պարզաբանում,
- Հաճախորդի կողմից հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացում,
- Բանկի կողմից հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ուսումնասիրություն,
- Հաճախորդի հետ հաշվի բացման հայտ-պայմանագրի/պայմանագրի կնքում:

Ընթացիկ հաշիվները բացվում են ինչպես Բանկի գործունեության վայրում, այնպես էլ հեռակառավարման համակարգերի միջոցով:

Պետական աջակցության և երեխայի միանգամյա նպաստի հաշիվը բացվում է երեխայի (հաշվետիրոջ) անունով, երեխայի հետ ՀՀ-ում նույն բնակության վայրի հասցեում հաշվառված օրինական ներկայացուցչի (ծնողի, խնամակալի, որդեգրողի) դիմումի հիման վրա:

Պետական աջակցության և երեխայի միանգամյա նպաստի հաշվետերն իրավունք ունի առանց սահմանափակումների տնօրինելու ընտանեկան դրամագլուխը՝ 18 տարին լրանալուց հետո, իսկ մինչ հաշվետիրոջ 18 տարին լրանալը, ընտանեկան դրամագլուխը անկանխիկ վճարումներ կատարելու միջոցով տնօրինվում է ընտանեկան դրամագլուխը տնօրինելու իրավունք ունեցող անձի կողմից՝ բացառապես ՀՀ օրենսդրությամբ սահմանված ուղղություններով:

Հաճախորդն իրավունք ունի ցանկացած ժամանակ փակել իր բանկային հաշիվը՝ լրացնելով համապատասխան դիմում, որտեղ նշվում են հաշվում առկա դրամական միջոցների մնացորդի նկատմամբ իրականացվող հետագա գործողությունները:

Զրոյական մնացորդով հաշիվները կարող են փակվել Բանկի կողմից՝ վեց ամիս հետո: Բանկն իրավունք ունի նաև իր նախաձեռնությամբ փակել Հաճախորդի հաշիվը, եթե վերջինս թույլ է տվել Բանկի ներքին իրավական ակտերի խախտում/ներ: Այդ դեպքում հաշվում եղած դրամական միջոցների մնացորդը տրվում է Հաճախորդին կամ նրա ցուցումով փոխանցվում է այլ հաշիվ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

Ընթացիկ հաշիվների բացման համար կիրառվում են հետևալ սակագները՝

Ընթացիկ հաշիվների բացման արժույթ	ՀՀ դրամ

	ԱՄՆ դոլար
	Եվրո
	ՌԴ ռուբլի
	Բրիտանական ֆունտ
	Շվեյցարական ֆրանկ
	Կանադական դոլար
Հաշվի բացման միանվագ վճար	
Բանկի գործունեության վայրում[1]	2,000 ՀՀ դրամ
Հեռակառավարման համակարգերի միջոցով	0
Պետական աջակցության հաշիվ	0
Օտարերկրյա քաղաքացիների համար	10 000 ՀՀ դրամ
Հաշվի սպասարկում (տարեկան)	
Ֆիզիկական անձանց	0
VIP Ֆիզիկական անձ	12 000 ՀՀ դրամ
Հաշվի փակում	0
Հաշվի չնվազող մնացորդ	
Ֆիզիկական անձանց/ Պետական աջակցության հաշիվ	0
Քաղվածքների և վճարային փաստաթղթերի տրամադրում գործառնությունների կատարմանն առընթեր, 30 օրյա պարբերականությամբ/	0
Քաղվածքների և վճարային փաստաթղթերի կրկնօրինակների տրամադրում[2]	1-12 ամիս վաղեմություն ունեցող՝ 1,000 ՀՀ դրամ: 1 տարուց ավել վաղեմություն ունեցող՝ 2,000 ՀՀ դրամ:
Հաշվին անկանխիկ միջոցների մուտքագրում	0
Հաշվի մնացորդի նկատմամբ հաշվարկվող տարեկան տոկոսադրույք[3]	
ՀՀ դրամ — մինչև 5 մլն. ՀՀ դրամ	0 %
ՀՀ դրամ — 5 մլն. ՀՀ դրամ և ավել	1 %
Արտարժույթ	0 %
Պետական աջակցության հաշիվ[4]	4.5 %
Տեղեկանքների տրամադրում[5]	2,000 ՀՀ դրամ
Տեղեկանքների տրամադրում աուդիտորական հարցումների վերաբերյալ (բացառությամբ ՀՀ բանկերի)[6]	10,000 ՀՀ դրամ

<u>Ընթացիկ հաշիվներով գործառնությունների իրականացում</u>

Ընթացիկ հաշվով դրամարկղային գործառնություններն Բանկն իրականացվում է հաշվի/հաշիվների մնացորդների սահմաններում՝ գանձելով Բանկի սակագներով սահմանված համապատասխան դրույքաչափերով միջնորդավճարներ:

Ընթացիկ հաշիվներին միջոցների մուտքերը և ելքերը կարող են իրականացվել Բանկի գլխամասում կամ մասնաճյուղերում՝ անձի ինքնությունը հաստատող բավարար փաստաթղթեր ներկայացնելու դեպքում: Կանխիկ միջոցները մուտքագրվում են ընթացիկ հաշիվներին այդ գումարների ներկայացման պահին: Բանկային հաշվից կանխիկ ելքագրումը կատարվում է անմիջապես՝ Հաճախորդի պահանջով:

Ընթացիկ հաշիվները կարող են տնօրինվել ինչպես Բանկ այցելելով, այնպես էլ հեռակառավարման համակարգերով:

Ընթացիկ հաշիվների վրա հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործառնություններ կատարելու դեպքում Բանկի կողմից կիրականացվի արտարժույթի փոխարկում՝ Բանկի կողմից սահմանված համապատասխան փոխարժեքներով:

Ընթացիկ հաշիվներից փոխանցումներ կատարելու նպատակով հաճախորդները Բանկին կարող են ներկայացնել համապատասխան ձևով լրացված և պատշաճ ստորագրված վճարման հանձնարարականներ:

Ընթացիկ հաշիվներով մինչև ժ. 15:30 ներկայացված վճարման հանձնարարագրերը Բանկի կողմից կատարվում են նույն բանկային օրը, իսկ ժ. 15:30 ից հետո ներկայացված վճարման հանձնարարագրերը Բանկի կողմից կատարվում են հաջորդ բանկային օրը:

ՀՀ դրամով փոխանցումների կատարման տևողությունը ՀՀ տարածքում կազմում է 1 (մեկ) բանկային օր:

---

[1] *Սակագինը չի կիրառվում բանկային ավանդների սպասարկման համար բացված հաշիվների նկատմամբ:*
[2] *Միջնորդավճարները ներկայացված են ներառյալ ԱԱՀ:*
[3] *Հաշվարկվող տոկոսագումարների հաշվեգրումը կատարվում է եռամսյակային կտրվածքով:*
[4] *Հաշվարկվող տոկոսագումարների հաշվեգրումը կատարվում է տարեկան կտրվածքով:*
[5] *Միջնորդավճարները ներկայացված են ներառյալ ԱԱՀ:*
[6] *Միջնորդավճարները ներկայացված են ներառյալ ԱԱՀ:*

Ընթացիկ հաշիվներով հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործառնություն կատարելու դեպքում Բանկն իրականացնում է արժույթի փոխարկում Բանկի կողմից սահմանված սակագներով:

Ընթացիկ հաշիվներին տոկոսների հաշվերումը իրականացվում է եռամսյակային կտրվածքով:

Հաճախորդի բանկային հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու իրավունքները կարող են սահմանափակվել հարկային մարմինների կողմից կայացված որոշումների համաձայն, ինչպես նաև դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կայացված որոշումների համաձայն:

Հաճախորդը կարող է տեղեկացվել արգելանքի մասին՝ արգելանք կիրառելու որոշումը Բանկի կողմից կատարելուց հետո: Առանց Հաճախորդի կարգադրության Հաճախորդի հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կողմից՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կայացված որոշումների համաձայն: Հաճախորդը կարող է տեղեկացվել իր հաշվից միջոցների բռնագանձման մասին՝ բռնագանձման որոշումը Բանկի կողմից կատարելուց հետո:

Կանխիկ գումարի մուտքագրում	
ա) ՀՀ դրամ[7]	
0 - 20 հատը	0
21 հատ և ավել	Յուրաքանչյուր մուտքը 30 ՀՀ դրամ
բ) ԱՄՆ դոլար	0
գ) Եվրո	
500 եվրո անվանական արժեքով թղթադրամներ	1 %
այլ անվանական արժեքով թղթադրամներ	0
դ) ՌԴ ռուբլի, Բրիտանական ֆունտ,Շվեյցարական ֆրանկ և այլ արտարժույթ	Սահմանվում է օրական գնանշմամբ[8]
Կանխիկ գումարի տրամադրում[9]	
ա) ՀՀ դրամ	0.2 % min 300 ՀՀ դրամ[10]
բ) ԱՄՆ դոլար	*1 % min 500 ՀՀ դրամ*
գ) Եվրո	*0.5 % min 500 ՀՀ դրամ*
դ) այլ	*0.3 % min 500 ՀՀ դրամ*
Հնամաշ և վնասված ՀՀ դրամի ընդունում	0
Հնամաշ և վնասված արտարժույթի ընդունում (ընդունվում է միայն ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի)	5 %
Չեկային գրքույկների տրամադրում[11]	
50 թերթ	4,000 ՀՀ դրամ
25 թերթ	3,000 ՀՀ դրամ
1 թերթ	250 ՀՀ դրամ
Կանխիկ արժույթի ստուգում և փաթեթավորում (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար,Եվրո, ՌԴ ռուբլի, Բրիտանական ֆունտ, Շվեյցարական ֆրանկ)	Ստուգվող փաթեթավորվող գումարի 0.1 %, նվազագույնը՝ 1,000 ՀՀ դրամ
Ոչ հաշվետեր հաճախորդներից ՀՀ մետաղադրամների ընդունում	
0-50,000 ՀՀ դրամ	0
50,001 ՀՀ դրամից ավել	1 % նվազագույնը՝ 1,000 ՀՀ դրամ

Ներբանկային փոխանցումներ բոլոր արժույթներով	0
Միջբանկային փոխանցումներ	
ՀՀ դրամ	
ա) Հաճախորդի բանկային հաշվից	0
բ) Առանց բանկային հաշվի առկայության[12]	

[7] *Հաշվի է առնվում մեկ աշխատանքային օրվա ընթացքում կատարված մուտքերը:*

[8] *Եթե ՌԴ ռուբլու մուտքը կատարվում է արագ դրամական փոխանցումների իրականացման համար՝ 0:*

[9] *Եթե գումարի չափը գերազանցում է 10 մլն. ՀՀ դրամը, 30 Հազ. ԱՄՆ դոլարը և 20 Հազ.Եվրոն ապա կանխիկ միջոցների տրամադրումը իրականացվում է հաճախորդի կողմից գումարը ստանալու նախորդ աշխատանքային օրը մինչև ժամը 14:30 ներկայացված հայտի հիման վրա: Նշված ժամկետում հայտ չներկայացնելու և Բանկում առկա կանխիկ միջոցների անբավարարության դեպքում, ներկայացվում է ՀՀ ԿԲ-ից կանխիկ գումարի ձեռք բերման «շտապ» հայտ, որի համար հաճախորդից գանձվում է պահանջվող գումարի 0.5 %-ը:*
Կանխիկ մուտքագրված գումարների սահմաններում, կանխիկ միջոցների տրամադրումն իրականացվում է առանձ միջնորդավճար գանձելու:

[10] *Հիփոթեքային վարկերի տրամադրման դեպքում կանխիկացման վճարը սահմանվում է 0 %:*

[11] *Միջնորդավճարները ներկայացված են ներառյալ ԱԱՀ:*

[12] *Էրեբունի մասնաճյուղի դեպքում 300 ՀՀ դրամ*

մինչև 500,000 ՀՀ դրամ	200 ՀՀ դրամ
500.001 ՀՀ դրամ և ավել	0.05%
Գույքահարկի գծով վճարումներ «Գույքահարկի բազայի միջոց»-ով (Բանկային հաշվից և առանց բանկային հաշվի առկայության)	300 ՀՀ դրամ
ԱՄՆ դոլար (OUR)[13]	0.1% min 5,000 ՀՀ դրամ max 50,000 ՀՀ դրամ
ԱՄՆ դոլար (Guaranted OUR)[14]	0.1% min 5,000 ՀՀ դրամ max 50,000 ՀՀ դրամ + ի հավելումն լրացուցիչ 10,000 ՀՀ դրամ
ԱՄՆ դոլար (BEN)[15]	3,000 ՀՀ դրամ
ԵՎՐՈ (OUR)	0.1% min 7,000 ՀՀ դրամ max 50,000 ՀՀ դրամ
ՌԴ ռուբլի (OUR)	0.1% min 5,000 ՀՀ դրամ max 50,000 ՀՀ դրամ
Այլ արտարժույթ (OUR)	0.1% min 10,000 ՀՀ դրամ max 50,000 ՀՀ դրամ
Վճարային վավերապայմանների փոփոխման հարցումներ	
ՀՀ դրամով՝	1,000 ՀՀ դրամ
Արտարժույթով՝	20,000 ՀՀ դրամ
Վճարման հանձնարարականի չեղյալ համարելու վերաբերյալ հարցումներ	25,000 ՀՀ դրամ
Կատարված փոխանցումներով գումարների որոնման հարցումներ	20,000 ՀՀ դրամ
Հանձնարարագրերի S.W.I.F.T. կրկնօրինակների տրամադրում[16]	1,000 ՀՀ դրամ

<u>Առարկայազուրկ մետաղական հաշիվներ</u>

Այս հաշիվները նախատեսված են անկանխիկ ոսկով խնայողություններ կատարելու, ինչպես նաև հաճախորդներին պատկանող անկանխիկ ոսկու հաշվառման նպատակով

Առարկայազուրկ մետաղական հաշիվներով կարող են իրականացվել

- Հաշվի համալրում,
- Հաշվի ելքագրում,
- Փոխանցումներ,

Հաշիվներ բացում ենք ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հաճախորդների համար՝ միայն 999.9 հարգի ոսկով, առանց նվազագույն մնացորդի պահանջի:

Մեզ մոտ կարելի է գնել անկանխիկ ոսկի՝ սկսած 31 գրամից (ոսկու գնանշումը կատարվում է գրամով): Մեր կայքում հրապարակվում են ոսկու գնանշման օրական տվյալները, որոնք փոփոխվում են՝ կախված միջազգային շուկաներում ոսկու գնից:

Հաշիվներում անկանխիկ ոսկին հաշվառում ենք դրամով՝ ՀՀ Կենտրոնական բանկի հայտարարած հաշվարկային գնով և կշռային (գրամային) արտահայտությամբ՝ 0.01 գրամ ճշտությամբ կամ տրոյական ունցիաներով՝ 0.001 տրոյական ունցիա ճշտությամբ (մեկ տրոյական ունցիան հավասար է 31.10348 գրամի):

Հեռակառավարման համակարգերով առարկայազուրկ մետաղական հաշիվներ չեն բացվում:

Հաշվի բացում	5,000 ՀՀ դրամ
Հաշվի սպասարկում (տարեկան)[17]	0.1%
Հաշվի փակում	0
Հաշվի չնվազող մնացորդ	0
Քաղվածքների և վճարային փաստաթղթերի Տրամադրում /30օրյա պարբերականությամբ	0
Քաղվածքների և վճարային փաստաթղթերի կրկնօրինակների տրամադրում[18]	1-12 ամիս վաղեմություն ունեցող՝ 1,000 ՀՀ դրամ: 1 տարուց ավել վաղեմություն ունեցող՝ 2,000 ՀՀ դրամ:
Հաշվին անկանխիկ ոսկու մուտքագրում՝	
Բանկի միջոցով գնված անկանխիկ ոսկու	0

[13] *Ծախսերը փոխանցող հաճախորդի հաշվին:*
[14] *Գումարը ստացողին հասնում է ամբողջական*
[15] *Ծախսերը շահառուի հաշվին:*
[16] *Միջնորդավճարները ներկայացված են ներառյալ ԱԱՀ*
[17] *Միջնորդավճարը գանձվում է ամսական կտրվածքով՝ հիմք ընդունելով օրական միջին մնացորդները:*
[18] *Միջնորդավճարները ներկայացված են ներառյալ ԱԱՀ:*

դեպքում	
Այլ բանկերից փոխանցված անկանխիկ ոսկու դեպքում	20,000 ՀՀ դրամ
Հաշվի մնացորդի նկատմամբ հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	0
Տեղեկանքների տրամադրում[19]	2,000 ՀՀ դրամ
Տեղեկանքների տրամադրում աուդիտորական հարցումների վերաբերյալ[20]	10,000 ՀՀ դրամ

<u>Հատուկ բանկային հաշիվներ</u>

Առաջարկում ենք հետևյալ տեսակի հատուկ բանկային հաշիվներ՝

- Էսքրոու հաշիվներ,
- Կառուցապատողի հատուկ հաշիվ,

Էսքրոու հաշիվ- Հաշվի այս տեսակը նախատեսված է ապրանքների առք ու վաճառքի գործարքների ապահով իրականացման համար: Այն հանդիսանում է հատուկ բանկային հաշիվ, որը կիրառվում է ապրանքների առք ու վաճառքի գործարքի ժամանակ կողմերի (այն է՝ Գնորդ և Վաճառող) միջև հաշվարկների/վճարումների ապահով իրականացման համար:

Էսքրոու հաշիվներ բացելու համար առուվաճառքի կողմերը (Գնորդը և Վաճառողը) պետք է միասին ներկայանան Բանկի գլխամաս կամ մոտակա մասնաճյուղ և ներկայացնեն գործարքին առընչվող փաստաթղթերը: Այս հաշիվները Բանկի կողմից բացվում են 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում՝ գործարքին վերաբերող փաստաթղթերի նախնական ուսումնասիրությունից և գործարքի վերաբերյալ Բանկի նախնական հավանությունը տալուց հետո: Էսքրոու հաշիվներից վճարման հանձնարարագրերով փոխանցումների իրականացում չի թույլատրվում:

Հաշվի բացման և սպասարկման վճար	Գործարքի գումարի 0.1% min 10,000 ՀՀ դրամ max 100,000 ՀՀ դրամ
Էսքրոու պայմանագրում պայմանների փոփոխություն	10,000 ՀՀ դրամ
Հաշվի փակում	Անվճար
Հաշվի մնացորդի դիմաց հաշվարկվող տոկոս	0
Հաշվից այլ հաշվարային և դրամարկղային գործառնությունների իրականացում	Համաձայն սույն Սակագների և դրույքների

Կառուցապատողի հատուկ հաշիվ- Հաշվի այս տեսակը առաջարկվում է կառուցապատողներին: Այս տեսակի հաշիվը նախատեսված է կառուցվող բազմաբնակարան շենքից անշարժ գույք գնելու իրավունքի պայմանագրի շրջանակներում գնորդի կողմից անշարժ գույքի գծով կանխավճարներ մուտքագրելու նպատակով:

Կառուցապատողի հատուկ հաշիվներ կարող են բացել այն կառուցապատողները, որոնք ցանկանում են իրենց կողմից կառուցվող բազմաբնակարան շենքերից բնակարանների գնման իրավունք ձեռք բերած գնորդներից ստանալ և դեպոնացնել կանխավճարներ: Այս հաշիվները բացվում են միայն Բանկի գործունեության վայրում: Կառուցապատողի հատուկ հաշիվները բացվում են անհրաժեշտ փաստաթղթերը Բանկ ներկայացնելուց և դիմում ներկայացնելուց հետո առավելագույնը մեկ բանկային օրվա ընթացքում: Տվյալ տեսակի հաշիվների բացման մանրամասներին կարող եք ծանոթանալ Բանկ պաշտոնական կայքում:

Հաշվի բացում	40,000 ՀՀ դրամ
Հաշվի մնացորդի դիմաց հաշվարկվող տոկոս	Կիրառվում է սույն Սակագներով և դրույքներով ընթացիկ հաշիվների համար սահմանված տոկոսադրույքները:
Հաշվի փակում	Անվճար
Հաշվից այլ հաշվարային և դրամարկղային գործառնությունների իրականացում	Համաձայն սույն Սակագների և դրույքների

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

[19] *Միջնորդավճարները ներկայացված են ներառյալ ԱԱՀ:*
[20] *Միջնորդավճարները ներկայացված են ներառյալ ԱԱՀ:*

Ավանդի արժութային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժութային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավելի է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	**16 միլիոն ՀՀ դրամ**	**7 միլիոն ՀՀ դրամ**	**16 միլիոն ՀՀ դրամ**(երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	**7 միլիոն ՀՀ դրամ** (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)